ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ

«26» հունիսի 2024 թ. N 246-Ն

Հ Ր Ա Մ Ա Ն

ԿԻՍԱԱԶԱՏ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՊԱՀՎՈՂ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԿԱՐՄԻՐ ԳՐՔՈՒՄ ԳՐԱՆՑՎԱԾ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ՝ ՍԿՍԱԾ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՆՍՈՒՆԱԿ ՍԵՐՆԴԻՑ, ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կենդանական աշխարհի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի «գ2» կետով՝

Հրամայում եմ

1. Սահմանել կիսաազատ պայմաններում պահվող՝ Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանիների՝ սկսած երկրորդ կենսունակ սերնդից, օգտագործման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Պարտականությունները կատարող՝ Տ. Գաբրիելյան

6/26/2024

«26» հունիսի 2024 թ.
ք. Երևան

Հավելված

շրջակա միջավայրի նախարարի

2024 թվականի հունիսի «26»-ի

N 246-Ն հրամանի

Կ Ա Ր Գ

ԿԻՍԱԱԶԱՏ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՊԱՀՎՈՂ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԿԱՐՄԻՐ ԳՐՔՈՒՄ ԳՐԱՆՑՎԱԾ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ՝ ՍԿՍԱԾ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՆՍՈՒՆԱԿ ՍԵՐՆԴԻՑ, ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ

1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են կիսաազատ պայմաններում պահվող՝ Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանիների՝ սկսած երկրորդ կենսունակ սերնդից, օգտագործման հետ կապված իրավահարաբերությունները:

2. Կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործողներն են ֆիզիկական և իրավաբանական անձինք:

3. Կիսաազատ պայմաններում պահվող՝ Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանիների՝ սկսած երկրորդ կենսունակ սերնդից, օգտագործումս (այսուհետ՝ օգտագործում) իրականացվում է Հայաստանի Հանրապետությունում կենդանական աշխարհի պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման բնագավառներում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված պետական մարմնի (այսուհետ՝ Լիազորված մարմին) թույլտվությամբ:

4. Թույլտվությունը տրամադրվում է սույն կարգի Չև N 1-ին համապատասխան:

5. Թույլտվություն ստանալու նպատակով ֆիզիկական կամ իրավաբանական անձինք (այսուհետ՝ Հայտատու) Լիազորված մարմին են ներկայացնում՝

1) Թույլտվության տրամադրման մասին հայտ՝ համաձայն Ձև N 2-ի:

6. Հայտում նշվում է.

1) իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը, գտնվելու վայրը, իրավաբանական անձի պետական գրանցման վկայականի (գրանցման) համարը, գործունեության իրականացման վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն (առկայության դեպքում), ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, անձնագրային տվյալները, բնակության վայրը, գործունեության իրականացման վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն (առկայության դեպքում), անհատ ձեռնարկատեր հանդիսացող ֆիզիկական անձի դեպքում՝ նաև անհատ ձեռնարկատիրոջ պետական գրանցման վկայականի (գրանցման) համարը,

2) օգտագործման նպատակը,

3) օգտագործման ժամանակահատվածը,

4) չափաքանակը (հատ,կգ),

5) օգտագործման վայրը (մարզը, համայնքը),

6) օգտագործման ենթակա կենդանական աշխարհի օբյեկտների տեսակները:

7. Հայտին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը.

1) իրավաբանական անձի պետական գրանցման վկայականի, կանոնադրության կամ ֆիզիկական անձի անձը հաստատող փաստաթղթի, անհատ ձեռնարկատեր հանդիսացող ֆիզիկական անձի դեպքում՝ նաև անհատ ձեռնարկատիրոջ պետական գրանցման վկայականի պատճենները,

2) Լիազորված մարմնի կողմից տրամադրված կիսաազատ պայմաններում պահելու թույլտվությունը,

3) անասնաբույժի կողմից տրամադրված օգտագործման ենթակա կենդանատեսակների առողջության վերաբերյալ տեղեկությունը,

4) տվյալ կենդանատեսակի հաշվառման վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն՝ համաձայն շրջակա միջավայրի նախարարի 2023 թվականի հունիսի 1-ի N 187-Ն հրամանի Հավելվածի Ձև 1-ի,

5) բնապահպանական նպատակով օգտագործելու՝ վայրի կենդանիների ազատ պայմաններում վերաբնակեցում իրականացնելու դեպքում նաև վերաբնակեցման ծրագիրը՝ համաձայն Կառավարության 2024 թվականի մայիսի 25-ի N 758-Ն որոշմամբ սահմանված կարգի:

8. Հայտը և հայտին կից փաստաթղթերը ներկայացվում են Լիազորված մարմին առձեռն կամ փոստով կամ էլեկտրոնային փոստով:

2. ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

9. Լիազորված մարմինը հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերն ստանալուց հետո՝ 30 աշխատանքային օրվա ընթացքում, տրամադրում է թույլտվություն կամ մերժում է հայտը:

10. Լիազորված մարմինը հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերն ստանալուց հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում, ստուգում է փաստաթղթերի ամբողջականությունը և հայտում կամ հայտին կից ներկայացված փաստաթղթերում թերություններ հայտնաբերելու կամ փաստաթղթերը թերի լինելու դեպքում գրավոր տեղեկացնում է Հայտատուին՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում վերացնելու Լիազորված մարմնի կողմից նշված թերությունները:

11. Լիազորված մարմինը հայտն ստանալուց հետո՝ 8 աշխատանքային օրվա ընթացքում, թույլտվության համար անհրաժեշտ լիակազմ և ամբողջական փաստաթղթերի պատճենները ներկայացնում է շրջակա միջավայրի նախարարի 2023 թվականի մարտի 27-ի N 111-Ն հրամանի 2-րդ կետով ստեղծված մասնագիտական եզրակացություն տրամադրող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) քննարկմանը:

12. Հանձնաժողովը հայտը և կից փաստաթղթերն ստանալու օրվանից ոչ ուշ, քան 20 աշխատանքային օրվա ընթացքում Լիազորված մարմնին է ներկայացնում դիրքորոշում տվյալ Հայտատուին թույլտվություն տալու վերաբերյալ:

13. Հանձնաժողովի անդամների առաջարկությամբ Լիազորված մարմինը Հանձնաժողովին է տրամադրում նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ բնապահպանության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնից (այսուհետ՝ տեսչական

մարմին) ստացած՝ տվյալ Հայտատուի իրավախախտումների վերաբերյալ տեղեկությունը:

14. Լիազորված մարմինը Հանձնաժողովի դիրքորոշումն ստանալուց հետո՝ 2 աշխատանքային օրվա ընթացքում, Հայտատուին գրավոր տեղեկացնում է թույլտվություն տրամադրելու կամ մերժելու վերաբերյալ:

15. Հայտատուն Լիազորված մարմնի կողմից թույլտվության տրամադրելու մասին տեղեկանալուց հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում, «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և չափով վճարում է պետական տուրքը, ինչից հետո Լիազորված մարմնից ստանում թույլտվությունը:

3. ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԵՐԺՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

16. Թույլտվության մասին հայտը մերժվում է, եթե.

1) հայտը և ներկայացված փաստաթղթերը թերի են (չեն լրացվել սույն կարգին համապատասխան Լիազորված մարմնի կողմից պատշաճ ծանուցելուց հետո) կամ բացակայում են սույն կարգի հավելվածի 7-րդ կետով սահմանված փաստաթղթերից որևիցե մեկը կամ դրանցում բերված տեղեկատվությունները չեն համապատասխանում իրականությանը,

2) Հանձնաժողովը տվել է բացասական դիրքորոշում:

17. Թույլտվության տրամադրումը մերժելու մասին վարչական ակտում պետք է հստակ նշվեն մերժման պատճառները:

4. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

18. Թույլտվության տրամադրումը մերժելու մասին վարչական ակտը կարող է բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված վարչական կամ դատական կարգով:

Ձև N 1

	ԿԻՍԱԱԶԱՏ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՊԱՀՎՈՂ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԿԱՐՄԻՐ ԳՐՔՈՒՄ ԳՐԱՆՑՎԱԾ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ՝ ՍԿՍԱԾ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՆՍՈՒՆԱԿ ՍԵՐՆԴԻՑ, ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ _____	ԵՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Տրման տարեթիվը, ամիսը, ամսաթիվը

_____

_____

o ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁ

Անունը, ազգանունը, անձնագրային տվյալները, բնակության վայրը, գործունեության իրականացման վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն (առկայության դեպքում), անհատ ձեռնարկատեր հանդիսացող ֆիզիկական անձի դեպքում՝ նաև անհատ ձեռնարկատիրոջ պետական գրանցման վկայականի (գրանցման) համարը,

_____

_____

_____

o ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁ

Իրավաբանական անձի անվանումը, պետական գրանցման վկայականի համարը, գտնվելու վայրը

Օգտագործման նպատակը

Օգտագործման ժամանակահատվածը

Օգտագործման ենթակա կենդանական աշխարհի
օբյեկտների տեսակները, չափաքանակը (հատ,կգ)

Օգտագործման վայրը, (մարզը, համայնքը)

Թույլտվության տրման հիմքը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Կ.Տ.

Ձև N2

ՀԱՅՏ

Օրինակելի ձև

ԿԻՍԱԱԶԱՏ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՊԱՀՎՈՂ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԿԱՐՄԻՐ ԳՐՔՈՒՄ ԳՐԱՆՑՎԱԾ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ՝ ՍԿՍԱԾ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՆՍՈՒՆԱԿ ՍԵՐՆԴԻՑ, ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ

_____

_____

իրավաբանական անձի (անվանումը, պետական գրանցման վկայականի (գրանցման) համարը, գտնվելու վայրը) գործունեության իրականացման վայրը,

հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն (առկայության դեպքում) կամ ֆիզիկական անձի (անունը, ազգանունը, անձնագրային տվյալները, բնակության

վայրը, գործունեության իրականացման վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն (առկայության դեպքում) անհատ ձեռնարկատեր հանդիսացող

ֆիզիկական անձի դեպքում՝ նաև անհատ ձեռնարկատիրոջ պետական գրանցման վկայականի (գրանցման) համարը) տվյալները)

_____

_____

_____

օգտագործման վայրը (մարզը, համայնքը)

_____

օգտագործման նպատակը

_____

օգտագործման ժամանակահատվածը

N	Կենդանական աշխարհի օբյեկտների տեսակը	Չափաքանակը (հատ, կգ)

Հայտին կից ներկայացվում է՝

1) իրավաբանական անձի պետական գրանցման վկայականի, կանոնադրության կամ ֆիզիկական անձի անձը հաստատող փաստաթղթի, անհատ ձեռնարկատեր հանդիսացող ֆիզիկական անձի դեպքում՝ նաև անհատ ձեռնարկատիրոջ պետական գրանցման վկայականի պատճենները,

2) Լիազորված մարմնի կողմից տրամադրված կիսաազատ պայմաններում պահելու թույլտվությունը,

3) անասնաբույժի կողմից տրամադրված օգտագործման ենթակա կենդանատեսակների առողջության վերաբերյալ տեղեկությունը,

4) տվյալ կենդանատեսակի վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն՝ համաձայն շրջակա միջավայրի նախարարի 2023 թվականի հունիսի 1-ի N 187-Ն որոշման Հավելվածի Չև 1-ի,

5) բնապահպանական նպատակով օգտագործելու՝ վայրի կենդանիների ազատ պայմաններում վերաբնակեցում իրականացնելու դեպքում վերաբնակեցման ծրագիրը:

_____

_____

Հայտատու՝ _____

(անուն ազգանուն, ստորագրություն)

«----» ---------- 202 թ.

Պաշտոնական հրապարակման օրը՝ 1 հուլիսի 2024 թվական: